

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՅ  
ՊԱՐՈՆ ՀՈՎԻԿ ԱԲՐԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Չեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Վահան Շովիաննիսյանի, Լիլիթ Գալստյանի, Արա Նուանյանի, Արմեն Ռուստամյանի, Արծվիկ Մինասյանի, Արմեն Աշոտյանի և Արտյուշ Շահբազյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության տոնների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն սկզբունքորեն դեմ չէ հայոց տոնացույցում ունենալ օրենքի նախագծով նախատեսված տոնները։ Սակայն գտնում ենք, որ Հայոց ազգային ինքնության տոնի օրվա առավել ճիշտ ընտրության համար անհրաժեշտ է կազմակերպել լրացուցիչ քննարկումներ։

Միաժամանակ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում օրենքի նախագծի քննարկման ժամանակ հարակից գեկուցմանը հանդես կգա Հայաստանի Հանրապետության նշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ  
Դ-330-17.09.2008-ԳԿ-010/0

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (հետայսու՝ օրենք) լրացնել 11.1-րդ հոդված՝ հետեւյալ բովանդակությամբ՝

«Հոդված 11.1 Հայոց ազգային ինքնության տոն՝ նշվում է օգոստոսի 11-ին, իսկ դրան նախորդող 5 օրերին, օգոստոսի 6-11 (Նավասարդյան տոներ), որպես կանոն, կազմանակերպվում են համահայկական միջոցառումներ (խորհրդաժողովներ, սպորտային, մշակութային եւ այլ բնույթի միջոցառումներ):»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

### ՕՐԻՆԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԴԻՄԱՎՈՐՈՒՄ

Հանրահայտ փաստ է, որ հայոց պատմական ավանդության համաձայն՝ Հայկ նահապետը (որին նախապես պաշտել ենք իբրեւ աստծո) եղել է մեր երկրի ու ժողովրդի անվանադիրը: Այդ են վկայում բազմաթիվ մատենագիրներ (Մովսես Խորենացի, Սեբեոս եւ Անանուն պատմիչ, Անանիա Շիրակացի, Վանական Վարդապետ, Հովհաննես Իմաստասեր եւ այլոք):

Նույն ավանդության համաձայն՝ հանուն Հայոց աշխարհի ու ազգի ազատության տարած նրա մեջ հաղթանակը դարձել է Հայոց Բուն տոմարի սկիզբը, հայոց ամենահին ու ամենափառապան տոնը: Ականավոր հայագետ Ղեւինդ Ալիշամի հաշվարկի համաձայն՝ այդ հաղթանակը տեղի է ունեցել ք.ա. 2492 թ. օգոստոսի 11-ին, որն էլ դարձել է Հայոց Բուն տոմարի մեկնակետը եղել է Նավասարդ ամսվա առաջին՝ Արեգ օրը:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, ընդունելով մատենագիտական եւ տոմարագիրական հաշվարկների հիմանը մեծ հայագետի կատարած ուսումնասիրությունը, ընդունել եւ այժմ էլ Եջմիածնի Մայր Աթոռի օրացույցում կիրառում է Հայոց Բուն տոմարը՝ հաշվարկելով այն ք.ա. 2492 թ. օգոստոսի 11-ից:

Հայ մատենագիրների երկերից հայտնի է նաեւ, որ Նավասարդի Արեգ օրը, եւ դրան նախորդող Ավելյաց ամսվա հինգ տոնական օրերը մեր նախնիները նշել են տոնակատարություններով՝ կոչելով դրանք՝ "Նավասարդյան տոներ":

Նավասարդյան տոների ընթացքում, տոնակատարություններից բացի, արքայի կողմից հրավիրվում էր Աշխարհաժողով, որը երկրի բարձրագույն խորհրդակցական ժողովն էր Եւ ամփոփում էր այդ տարի կատարվածը, նաեւ ուղենիշ-որոշումներ կայացնում հաջորդ տարվա համար:

Նկատի ունենալով, որ Նավասարդյան տոների վերականգնումը կունենա խիստ արդիական նշանակություն համայն հայության համար Եւ՝ Հայրենիքում, Եւ՝ Սփյուռքում՝ ինչպես ազգային ակունքների ճանաչողության, այնպես էլ գործնական նպատակառումներով, Եւ, հատկապես, որ Հայկ նահապետը Հայոց ազգային միասնության գլխավոր Եւ անխաթար խորհրդանիշն է, օրինագծի հեղինակմերը, Ելնելով վերը նշվածից, կարեւորելով «Սերունդ» հասարակական միավորման այս ուղղությամբ ձեռնարկված նախաձեռնությունները, ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Են՝

- Հայոց Բուն տոմարի մեկնակետ Նավասարդի Արեգ օրը՝ Օգոստոսի 11-ը, հայտարարել ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՍՈՒԹՅԱՆ ՏՈՆ:

- Վերականգնել Նավասարդի Արեգին, Եւ դրան նախորդող Ավելյաց ամսվա հինգ տոնական օրերին (Օգոստոսի 6-11) անցկացվող Նավասարդյան տոները:

- Վերականգնելով ավանդույթը՝ ամեն տարի Նավասարդյան տոներին հրավիրել համայն հայության՝ Հայրենիքի Եւ Սփյուռքի ներկայացուցիչների խորհրդաժողով՝ ամփոփելու նախորդ տարվա արածն ու նախատեսելու եկող տարի ամելիքը:

- Նավասարդյան տոնական օրերին անցկացնել համահայկական միջոցառումները / օրինակ՝ "Հայրենիք-Սփյուռք" խորհրդաժողովը, Համահայկական խաղերը, "Մեկ ազգ, մեկ մշակույթ" փառատոնը, գիտա-մշակութային, հասարակական Եւ այլաբնույթ համահայկական միջոցառումները/:

Նախընտրելի է, որ Նավասարդյան տոները նշվեն ամեն տարի, իսկ տասը տարին մեկ՝ հոբելյանական շուքով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՅ  
ՊԱՐՈՆ ՀՈՎԻԿ ԱԲՐԱՅԱՑՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Վահան Յովհաննիսյանի, Լիլիթ Գալստյանի, Արա Նուանյանի, Արմեն Ռուստամյանի, Արծվիկ Մինասյանի և Արտյուշ Շահբազյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության զինանշանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ սկզբունքային առարկություններ չունի:

Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ խնդրի ամբողջական կարգավորման նպատակով անհրաժեշտ է մեկ միասնական փաթեթով ներկայացնել նաև այլ օրենքներում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծեր, որոնցով կսահմանվեն օրենքի խախտման դեպքում պատասխանատվություն նախատեսող նորմերը և պատասխանատվության միջոցներ կիրառող պետական լիազոր մարմինը:

Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս՝ հարակից գեկուցմանը հանդես կգա Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարար Յ. Պողոսյանը:

Հարգանքով՝

Տիգրան Սարգսյան

Նախագիծ  
Դ-329-17.09.2008-ԴԻ-010/0

**ՂԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«Հայաստանի Հանրապետության զինանշանի մասին» Հայաստանի Հանրապետության  
օրենքում լրացում կատարելու մասին**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2006 թվականի հունիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության զինանշանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (հետայսու՝ օրենք) 2-րդ հոդվածի վերջում ավելացնել նոր մաս հետեւյալ բովանդակությամբ՝

«Արգելվում է՝

1) Հայաստանի Հանրապետության զինանշանի, սույն օրենքով սահմանված, պատկերի, դրա կառուցվածքի, ինչպես նաև գույների փոփոխումը, բացառությամբ սույն օրենքով նախատեսված միագույն օգտագործման դեպքերի,

2) Հայաստանի Հանրապետության զինանշանի սույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պատկերի կամ դրա բաղադրիչների պատճենահանած գործածումը այլ զինանշաններում, տարբերանիշերում կամ խորհրդանիշերում:»:

**Հոդված 2.** Օրենքի 3-րդ հոդվածում «զինանշանից» բառից հետո լրացնել «եւ չեն կարող շփոթության աստիճան նման լինել Հայաստանի Հանրապետության զինանշանին» բառերով:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՍ ՅԻՄԱՎՈՐՈՒՄ**

«Հայաստանի Հանրապետության զինանշանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու նպատակը ՀՀ խորհրդանիշ հանդիսացող զինանշանի հնարավոր ձեւախնդրումն ու անարգումը կանխարգելելն է: Գործող օրենքով սահմանված չէ ՀՀ զինանշանի կառուցվածքային, պատկերային կամ գունային փոփոխման ուղղակի արգելք: Օրինագծի ընդունումը համապատասխան հիմքեր կստեղծի, որոնց ներքո զինանշանը օրենքի պահանջների խախտմամբ փոփոխելու կամ օգտագործելու դեպքում առավել ամբողջական կիրառելի կղառնա նաեւ քրեական օրենսդրությամբ (ՀՀ քրեական օրենսդրի 331 հոդվածով) նախատեսված պատասխանատվության միջոցը: